

ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ԴՈՒ ՏԵՂՅԱԿ ԼԻՆԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԵՍ

տ ե ղ ե կ ա գ ի ռ N 36

Մ ա ռ տ 2012

«Դու տեղյակ լինելու իրավունք ունես» տեղեկագիրը հրապարակվում է Ինֆորմացիայի ազատության կենտրոնի կողմից իրականացվող «Տեղեկատվության ազատությունը որպես համայնքային մասնակցության միջոց» ծրագրի շրջանակում, Ամերիկայի Միացյալ Նահանգների Միջազգային զարգացման գործակալության տրամադրած աջակցությամբ:

Հոդվածներում արտահայտված տեսակետները հեղինակային են եւ չեն արտահայտում ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության տեսակետը:



Հրապարակվում է 2001 թվականից

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

«Սև ցուցակին» ավելացել է «Սպիտակ ցուցակը»	5
ՍՊԻՏԱԿ ՑՈՒՑԱԿ 2011	5
ՍԵՎ ՑՈՒՑԱԿ 2011	6
<u>ՏԱ ԴԱՏԱԿԱՆ ԳՈՐԾԵՐ</u>	
Դատավորը չգիտի՝ որոնք են հանրային նշանակության կազմակերպությունները.....	8
3 տարի տևած դատական գործն ավարտվեց ԻԱԿ-ի հաղթանակով	9
ԻԱԿ-ն ընդդեմ «Համալսարանականներ» համատիրության.	10
«Համալսարանականներ» համատիրությունը ընդհատակում է գործում.....	11
ԻԱԿ-ն ընդդեմ «ՓՄՁ ներդրումներ» ՈւՎԿ ՓԲԸ-ի	12
Արտակ Ձեյնալյանի և Արայիկ Ղազարյանի դիմումը Սահմանադրական դատարան.....	13
<u>ՆՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐ</u>	
Տեղեկատվական ցուցատախտակները՝ հրապարակայնության ապահովման մատչելի միջոց... ..	14
Տեղեկատվության ազատության գրքեր՝ դատապարտյալներին	14
ԻԱԿ-ը հրապարակում է Մաշտոցի պուրակի խնդրահարույց փաստաթղթերը.....	15
Տեղեկատվական վեճերի խորհրդի փորձագիտական եզրակացությունը ՀՀ քաղաքացի Գուրգեն Աղաջանյանն ընդդեմ «Ժողովուրդ» օրաթերթի հայցի վերաբերյալ	16
<u>ՀՈԴՎԱԾՆԵՐ</u>	
Պաշտոնական կայքերին ներկայացվելու են նոր պահանջներ.. ..	17
Կուսակցությունները՝ տեղեկատվություն տնօրինող	20

Ծրագրի ղեկավար՝ Շուշան Դոյդոյան

«Սև ցուցակին» ավելացել է «Սպիտակ ցուցակը»

Սև ցուցակին կից առաջին անգամ հրապարակվում է նաև Սպիտակ ցուցակ, որտեղ տեղ են գտել այն անձանց անունները, ովքեր տարվա եռամսյակային Սև ցուցակներում հայտնվելուց հետո դրականորեն փոխել են իրենց աշխատառճը և օրենքին համապատասխան պատասխանել են տեղեկություն ստանալու հարցումներին:

ՍՊԻՏԱԿ ՅՈՒՑԱԿ 2011

Ինֆորմացիայի ազատության կենտրոնն իր տարեկան Սև ցուցակին զուգահեռ հրապարակում է նաև տարեկան Սպիտակ ցուցակ: Բոլոր այն գերատեսչությունները, որոնք եռամսյակային Սև ցուցակներում հայտնվելուց հետո վերանայում են տեղեկատվության ազատության ոլորտում իրենց գործունեությունը և բարեփոխումներ իրականացնում տեղեկատվության մատչելիությունն ապահովելու նպատակով, այլևս չեն ընդգրկվում տեղեկատվության ազատության իրավունքը խախտած պաշտոնյաների տարեկան ամփոփ Սև ցուցակում: Այդ գերատեսչություններն ու նրանց ղեկավարներն ընդգրկվում են ԻԱԿ-ի ամենամյա Սպիտակ ցուցակում:

• **Հարություն Քուշկյան - ՀՀ Առողջապահության նախարար**

ՀՀ առողջապահության նախարար Քուշկյանը հայտնվել էր Սև ցուցակում, քանի որ անպատասխան էր թողել ԻԱԿ-ի 07.02.2011թ.-ի հարցումը, որով ԻԱԿ-ը խնդրել էր տրամադրել, թե կա՞նք արդյոք նախարարության տնօրինության տակ փաստաթղթեր, որոնք գաղտնագերծվել են 2010թ.-ին, և եթե կան, ապա խնդրել էր տրամադրել այդ փաստաթղթերի պատճենները: Սակայն Սև ցուցակի հրապարակումից անմիջապես հետո ՀՀ առողջապահության նախարարությունը պատասխանեց ԻԱԿ-ի հարցմանը: Բացի այդ, նախարարության այն աշխատակիցը, ում մեղքով կառույցը հայտնվել էր եռամսյակային Սև ցուցակում, նկատողություն ստացավ, ինչպես նաև նախարար Հարություն Քուշկյանը հրապարակավ հայտարարեց, որ հետևողական են լինելու, որպեսզի տեղեկատվությունը սահմանված ժամկետում տրամադրվի: ԻԱԿ-ի հետագա ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ իսկապես այս նախարարությունում իրավիճակը ՏԱ ոլորտում բարեփոխվել է:

• **Սարգիս Ղարաբեշիշյան - Ստեփանավանի քաղաքապետ**

Ստեփանավանի քաղաքապետարանն անպատասխան էր թողել ԻԱԿ-ի 18.04.2011թ. հարցումը, որով ԻԱԿ-ը խնդրել էր տրամադրել Ստեփանավանի ավագանու այն որոշման պատճենը, որով ավագանին սահմանել էր Ստեփանավանի քաղաքապետարանի կողմից տրամադրվող տեղեկատվության տրամադրման վճարի չափը` 1 էջի համար 500 ՀՀ դրամ:

2011թ.-ի առաջին եռամսյակային Սև ցուցակում ընդգրկվելուց անմիջապես հետո Ստեփանավանի քաղաքապետարանի ավագանին իր իսկ նախաձեռնությամբ ուժը կորցրած ճանաչեց ավագանու այն որոշումը (թիվ 19-Ն), համաձայն որի` քաղաքապետարանը տեղեկատվության մեկ էջը տրամադրում էր 500 դրամ վարձավճարով: Ստեփանավանի քաղաքապետարանը նաև ԻԱԿ-ի հարցմանը տրամադրեց լիարժեք պատասխան:

ՍԵՎ ՑՈՒՑԱԿ 2011

Այս անձինք խախտել են Ինֆորմացիայի ազատության կենտրոնի և քաղաքացիների տեղեկություն ստանալու իրավունքը 2011 թվականի ընթացքում:

• Արմեն Երիցյան - ՀՀ Արտակարգ իրավիճակների նախարար

Ինֆորմացիայի ազատության կենտրոնը 2011թ.-ի հոկտեմբերի 19-ին փոստով գրավոր հարցում էր ուղարկել ՀՀ Արտակարգ իրավիճակների նախարարություն՝ խնդրելով տրամադրել տեղեկություններ 2010թ.-ին նախարարության կողմից գաղտնագերծված փաստաթղթերի մասին: Սա կրկնակի հարցում էր, քանի որ նախարարությունը չէր պատասխանել ԻԱԿ-ի 29.03.2011թ.-ի հարցմանը գաղտնագերծված փաստաթղթերի վերաբերյալ: Այս կրկնակի հարցումը նույնպես մնացել է անպատասխան: Գաղտնագերծված փաստաթղթերի մասին ԻԱԿ-ի 07.02.2011թ.-ի հարցմանն ի պատասխան նախարարությունը հղում է արել ՀՀ Հատուկ քննչական ծառայությանը՝ նշելով, որ այդ փաստաթղթերն առգրավվել են ՀՀ ՀԶԾ կողմից: Հատուկ քննչական ծառայությունը, սակայն, ԻԱԿ-ին տեղեկացրել է, որ առգրավված փաստաթղթերի պատճեններն առկա են ԱԻ նախարարությունում: Այսինքն, տեղեկատվություն տնօրինողը ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարությունն է: Սակայն ԱԻ-ն անպատասխան է թողել գաղտնագերծված փաստաթղթերի պատճենները տրամադրելու մասին ԻԱԿ-ի 29.03.2011թ.-ի կրկնակի հարցումը:

ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարն անպատասխան է թողել նաև ԻԱԿ-ի 25.05.2011թ.-ի հարցումը, որով ԻԱԿ-ը խնդրել էր տրամադրել, թե կա՞նք արդյոք նախարարության տնօրինության տակ փաստաթղթեր, որոնք գաղտնագերծվել են 2010թ.-ին, և եթե կան, ապա խնդրել էր տրամադրել այդ փաստաթղթերի պատճենները՝ նամակին կցելով ՀՀ Հատուկ քննչական ծառայության պատասխանը:

• Սեյրան Օհանյան - ՀՀ պաշտպանության նախարար

Ուսանողուհի Լիլիթ Սեդրակյանը 20.05.2011թ. գրավոր հարցմամբ դիմել էր ՀՀ պաշտպանության նախարարին՝ խնդրելով տրամադրել տեղեկատվություն այն մասին, թե 2010-2011թթ.. ընթացքում ՀՀ զորամասերում տարբեր պատճառներով քանի՞ զինծառայող է մահացել և ի՞նչ միջոցառումներ են ձեռնարկվում նման միջադեպերից խուսափելու համար: Ուսանողուհու հարցումը մնացել է անպատասխան: 22.06.2011թ.-ին ԻԱԿ-ը նույն հարցումը ուղարկեց նախարար Սեյրան Օհանյանին, որը նույնպես մնաց անպատասխան:

• Արթուր Գևորգյան - Երևանի քաղաքապետարանի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի վարչության պետ

Արթուր Գևորգյանն անպատասխան է թողել լրագրող Արման Ղարիբյանի 23.06.2011թ.-ին Երևանի քաղաքապետարանի պաշտոնական էլեկտրոնային հասցեին ուղարկված հարցումը, որով լրագրողը տեղեկատվություն էր ուզում, թե ներկայումս քանի՞ մանկապարտեզ է գործում Երևան քաղաքում և 2000 թվականից մինչ այսօր քանի մանկապարտեզ է փակվել: Ի դեպ, լրագրողը զանգել և ճշտել է, որ հարցումը ստացել են:

• Սասուն Սաֆարյան - Այգեծորի գյուղապետ

ԻԱԿ-ը 2011թ.-ի մայիսի 10-ին դիմել էր Այգեծորի գյուղապետարանին և խնդրել էր տրամադրել Այգեծորի ավազանու 2011թ.-ի նիստերի արձանագրությունների պատճենները: Գյուղապետարանն ԻԱԿ-ի հարցումը թողել էր անպատասխան: 2011թ.-ի սեպտեմբերի 14-ին ԻԱԿ-ը կրկնակի հարցմամբ նորից դիմեց գյուղապետարանին՝ խնդրելով տրամադրել վերոնշյալ տեղեկությունները: Սակայն ԻԱԿ-ի կրկնակի հարցումը նույնպես մնացել է անպատասխան:

• Ստեփան Ասլանյան - «Աշտարակ կաթ» ՓԲԸ-ի տնօրեն

Ինֆորմացիայի ազատության կենտրոնը 07.11.2011թ.-ին դիմել էր «Աշտարակ կաթ» ՓԲԸ-ին՝ խնդրելով տրամադրել տեղեկություններ կազմակերպության արտադրանքի վերաբերյալ: Սակայն ԻԱԿ-ի հարցումը մնացել է անպատասխան:

● **Տիգրան Վարդանյան - «Դուստր Մարիաննա» ՍՊԸ-ի տնօրեն**

Ինֆորմացիայի ազատության կենտրոնը 18.11.2011թ.-ին դիմել էր «Դուստր Մարիաննա» ՍՊԸ-ին՝ խնդրելով տրամադրել տեղեկություններ կազմակերպության արտադրանքի վերաբերյալ: Առաջին հարցումը կազմակերպությունը թողել է անպատասխան: ԻԱԿ-ը ուղարկել է կրկնակի հարցում, որին ՍՊԸ-ն ժամկետների խախտմամբ տրամադրել է թերի և անհիմն պատասխան:

● **Բորիս Սակիջյան - Հյուսիսային համալսարանի ռեկտոր**

Հյուսիսային համալսարանն անպատասխան է թողել քաղաքացի Հռիփսիմե Հովհաննիսյանի 17.03.2011թ. հարցումը, որով քաղաքացին խնդրել էր հայտնել 2010թ.-ին Հյուսիսային համալսարանում կատարվե՞լ են արդյոք վերանորոգման աշխատանքներ, եթե այո, ապա որքա՞ն գումար է ծախսվել: Հյուսիսային համալսարանն անպատասխան է թողել նաև ԻԱԿ-ի կողմից 29.03.2011թ.-ին ուղարկված նույնաբովանդակ հարցումը:

● **Արման Խաչատուրյան - «ՀայՓոստ» ՓԲԸ գլխավոր գործադիր տնօրեն /այժմ նախկին/**

«Մարշալ Բաղրամյան համատիրության» նախագահ Ռոբերտ Մկրտչյանը 12.10.2010թ.-ին դիմումով դիմել է Արման Խաչատուրյանին, սակայն մինչ օրս պատասխան չի ստացել: 26.05.2011թ. ԻԱԿ-ը հարցում է ուղարկել՝ խնդրելով տրամադրել տեղեկատվություն, թե ի՞նչ փուլում է գտնվում համատիրության նախագահ Ռոբերտ Մկրտչյանի դիմումը և ի՞նչ ժամկետում նրան կտրվի պատասխան: Հարցումը ևս մնացել է անպատասխան:

● **Արմեն Թադևոսյան - «Համալսարանականներ» համատիրության նախագահ**

Համատիրության նախագահն անպատասխան է թողել Ինֆորմացիայի ազատության կենտրոնի 13.06.2011թ. համատիրության գործունեությանը վերաբերող հարցումը: Անպատասխան է մնացել նաև ԻԱԿ-ի 30.06.2011թ.-ի կրկնակի հարցումը: Ինֆորմացիայի ազատության կենտրոնը 2011թ.-ի օգոստոսի 6-ին կրկին գրավոր հարցմամբ դիմել է «Համալսարանականներ» համատիրությանը՝ խնդրելով տեղեկություններ Ծարավ Աղբյուրի 55/5 շենքի սպասարկման վերաբերյալ, ինչպես նաև խնդրելով համատիրության կանոնադրության պատճենը: ԻԱԿ-ի հարցումը մնացել է անպատասխան:

● **Արման Մեսրոպյան - «Եռյակ» համատիրության նախագահ**

ԻԱԿ-ը 2011թ.-ի օգոստոսի 6-ին փոստով ուղարկված գրավոր հարցմամբ «Եռյակ» համատիրությունից տեղեկություններ էր խնդրել համատիրության գործունեության վերաբերյալ: Համատիրությունը ԻԱԿ-ի հարցումը թողել է անպատասխան:

● **Վարդուշ Կինկլաձե - «Հ և Հ» համատիրության նախագահ**

ԻԱԿ-ը 2011թ.-ի օգոստոսի 6-ին փոստով գրավոր հարցում էր ուղարկել «Հ և Հ» համատիրությանը՝ խնդրելով տեղեկություններ համատիրության գործունեության վերաբերյալ: Համատիրությունը ԻԱԿ-ի հարցումը թողել է անպատասխան:

● **Կարինե Խաչատրյան - «Ավան» համատիրության նախագահ**

Ինֆորմացիայի ազատության կենտրոնը 2011թ.-ի օգոստոսի 6-ին փոստով ուղարկված գրավոր հարցմամբ դիմել է «Ավան» համատիրությանը և խնդրել տեղեկություններ համատիրության գործունեության վերաբերյալ: Համատիրությունը ԻԱԿ-ի հարցմանը չի պատասխանել:

Ի դեպ, ԻԱԿ-ի տարեկան Սև ցուցակում հայտնված պաշտոնյաներից չորսից ԻԱԿ-ը տեղեկատվություն կստանա դատական կարգով: Ներկայումս ՀՀ դատարաններում քննվում են Ինֆորմացիայի ազատության կենտրոնի տեղեկատվություն տրամադրելու պահանջի մասին 4 դատական հայց՝ ընդդեմ ՀՀ Արտակարգ իրավիճակների նախարարության, «Համալսարանականներ» համատիրության, «Աշտարակ կաթ» ՓԲԸ-ի և «Դուստր Մարիաննա» ՍՊԸ-ի:

Դատավորը չգիտի՝ որոնք են հանրային նշանակության կազմակերպությունները

Ինֆորմացիայի ազատության կենտրոնը 2011թ.-ի դեկտեմբերին «Աշտարակ-Կաթ» ՓԲԸ-ի և «Դուստր Մարիաննա» ՍՊԸ-ի դեմ հայց էր ներկայացրել ՀՀ վարչական դատարան, քանի որ վերջիններս խախտել էին ԻԱԿ-ի՝ տեղեկություն ստանալու իրավունքը: Սակայն, 2012թ.-ի հունվարի 23-ին և 26-ին ՀՀ վարչական դատարանը մերժեց այս ընկերությունների դեմ ԻԱԿ-ի հայցերի ընդունումն այն պատճառաբանությամբ, թե նշված ընկերությունները հանրային նշանակության կազմակերպություններ և տեղեկատվություն տնօրինողներ չեն:

Ինֆորմացիայի ազատության կենտրոնը տեղեկատվություն ստանալու հարցմամբ 2011թ.-ի նոյեմբերին դիմել էր «Աշտարակ-Կաթ» ՓԲԸ-ի տնօրեն Ստեփան Ասլանյանին և «Դուստր Մարիաննա» ՍՊԸ-ի տնօրեն Տիգրան Վարդանյանին՝ խնդրելով հայտնել արդյոք այդ ընկերությունների կաթնամթերքը արտադրվում է բնական կաթից, թե՞ կաթնափոշուց, ինչպես նաև տրամադրել ցանկ, թե ընկերությունների կաթնամթերքներից որն է բնական կաթից, որը՝ ոչ, և/կամ որ արտադրատեսակի մեջ բնական կաթի քանակն ինչքան է: Այս հարցումներն անպատասխան մնալուց հետո ԻԱԿ-ը տեղեկատվություն ստանալու կրկնակի հարցումներ ուղարկեց «Աշտարակ-Կաթ» ՓԲԸ-ին և «Դուստր Մարիաննա» ՍՊԸ-ին: Կրկնակի հարցմանն ի պատասխան՝ «Դուստր Մարիաննա» ՍՊԸ-ից ստացվեց էլեկտրոնային պատասխան, ըստ որի՝ ԻԱԿ-ի խնդրած տեղեկությունը մակնշված է կազմակերպության արտադրանքի յուրաքանչյուր տուփի վրա, ինչպես նաև, հետաքրքրող տեղեկությունները ստանալու համար հղում էր արված կազմակերպության կայքին: Սակայն ԻԱԿ-ի խնդրած տեղեկություններն առկա չէին ոչ կազմակերպության արտադրանքի տուփերի վրա, ոչ էլ կայքում: Ուստի, պատասխանը համարվել է անհիմն: Իսկ «Աշտարակ-Կաթ» ՓԲԸ-ն Ինֆորմացիայի ազատության կենտրոնի կրկնակի հարցումը թողեց անպատասխան:

ՀՀ վարչական դատարանը մերժելով ԻԱԿ-ի հայցերի ընդունումը, պատճառաբանել է, որ նշված ընկերությունները ուղղակի շահույթ ստանալու նպատակ հետապնդող (առևտրային) ընկերություններ են, հետևաբար «ներկայացված հայցապահանջները չեն բխում հանրային իրավահարաբերություններից...»: Այլ կերպ ասած՝ դատարանը

համարել է, որ «Աշտարակ-Կաթ» ՓԲԸ-ն ու «Դուստր Մարիաննա» ՍՊԸ-ն հանրային նշանակություն չունեն:

Հայցի ընդունումը մերժած անտեղյակ դատավորներին տեղեկացնենք, որ ՀՀ ՏՃտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի կայքում՝ տեղադրված է Հայաստանում ապրանքային շուկաներում գերիշխող դիրք ունեցող տնտեսվարող սուբյեկտների ցանկը, որում ներառված են նաև «Աշտարակ-Կաթ» և «Դուստր Մարիաննա» ընկերությունները: Իսկ «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի համաձայն՝ ապրանքային շուկաներում մենաշնորհ կամ գերիշխող դիրք ունեցող կազմակերպությունները համարվում են հանրային նշանակության կազմակերպություններ և տեղեկատվություն տնօրինողներ են:

Ավելացնենք, որ Ինֆորմացիայի ազատության կենտրոնը բողոքարկել է այս երկու որոշումներն էլ: 2012թ. մարտի 5-ին ՀՀ վարչական վերաքննիչ դատարանը՝ նախագահությամբ դատավոր Ա.Բաբայանի, ԻԱԿ-ի վերաքննիչ բողոքները բավարարել է մասնակի: Դատարանը որոշել է «Աշտարակ-Կաթ» ՓԲ ընկերության տնօրեն Ստեփան Ասլանյանին և «Դուստր Մարիաննա» ընկերության տնօրենին վարչական պատասխանատվության ենթարկելու պահանջի մասով ԻԱԿ-ի հայցը բավարարել, իսկ տեղեկատվություն տրամադրելուն պարտավորեցնելու պահանջի մասով մերժել է ԻԱԿ-ի հայցը: *Այսինքն, վերաքննիչ դատարանի որոշման համաձայն, վերաքննիչ դատարանը պարտավորվում է ընդունել ԻԱԿ-ի հայցերը միայն*

1. http://competition.am/uploads/resources/Cucak_dominant_for_site_24_11_2011.pdf

3 տարի տևած դատական գործն ավարտվեց ԻԱԿ-ի հաղթանակով

Տեղեկատվությունը թաքցնելու համար «Երևանի կառուցապատման և ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՈԱԿ-ը համառ պայքարեց 3 տարի՝ դատական բողոքարկումների վրա վատնելով պետական ռեսուրսները և ի վերջո պարտվեց:

2012թ.-ի հունվարի 18-ին ՀՀ Վճռաբեկ դատարանը վերջ դրեց տեղեկատվություն ստանալու համար Ինֆորմացիայի ազատության կենտրոնի եռամյա պայքարին՝ վերջնականապես մերժելով «Երևանի կառուցապատման և ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՈԱԿ-ի վճռաբեկ բողոքի ընդունումը:

ԻԱԿ-ը տեղեկություն ստանալու հարցում էր ուղարկել ՊՈԱԿ-ին դեռևս 2009թ.-ի փետրվարի 27-ին՝ խնդրելով տեղեկություններ տրամադրել ՊՈԱԿ-ի գործունեության վերաբերյալ, այդ թվում՝ 2006, 2007, 2008թ.թ.-ին ՊՈԱԿ-ի հետ հանձնարարության և նկարագրության պայմանագիր կնքած կազմակերպությունների ցանկը և այդ պայմանագրերից ՊՈԱԿ-ի ստացած հասույթի չափը: Ի պատասխան՝ «Երևանի կառուցապատման և ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՈԱԿ-ը հայտնել էր, որ ԻԱԿ-ի պահանջած տեղեկությունները համարվում են առևտրային գաղտնիք: Այս պատասխանն անհեթեթ էր, քանի որ ՊՈԱԿ-ը ոչ առևտրային կազմակերպություն է, չի հետապնդում առևտրային շահ, հետևաբար չի կարող ունենալ առևտրային գաղտնիք: Հարկ է նշել, որ պահաջվող տեղեկություններն անգամ ՊՈԱԿ-ի հետ պայմանագիր կնքած կազմակերպությունների առևտրային շահ չեն կարող համարվել, քանի որ ԻԱԿ-ը խնդրել է ընդհանուր հասույթի վերաբերյալ տեղեկություն՝ այլ ոչ յուրաքանչյուր կազմակերպությունից ստացված գումարի չափը:

ՀՀ վարչական դատարանը մասամբ վարույթ ընդունեց ԻԱԿ-ի հայցը՝ մերժելով ՊՈԱԿ-ի տնօրենին վարչական պատասխանատվության ենթարկելու պահանջը: ԻԱԿ-ը ՀՀ վարչական դատարանի վճիռը այս մասով բողոքարկեց: Ինֆորմացիայի ազատության կենտրոնն ընդդեմ «Երևանի կառուցապատման և ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՈԱԿ-ի գործի քննությունը վարչական դատարանում 15.07.09թ.-ին հետաձգվեց անորոշ ժամանակով: Պատճառն այն էր, որ ՊՈԱԿ-ը լուծարվում էր, և մինչև իրավահաջորդու-

թյան հարցը չլուծվեր, գործի հետագա քննությունն անհնար էր: Սակայն ՊՈԱԿ-ն այդպես էլ չլուծարվեց, և դատաքննությունը շարունակվեց: 2009թ.-ի դեկտեմբերի 7-ին ՀՀ վարչական դատարանը մերժեց ԻԱԿ-ի հայցը: Դատարանը գտել էր, որ ՊՈԱԿ-ն ըստ էության պատասխանել է ԻԱԿ-ի տեղեկատվություն ստանալու հարցմանը. իսկ 2-րդ և 3-րդ կետերով ներկայացված հարցերի պատասխանները պարունակում են առևտրային գաղտնիք:

2009թ. դեկտեմբերին ԻԱԿ-ը վճռաբեկության կարգով բողոքարկեց ՀՀ վարչական դատարանի վճիռը: 2010թ. հունիսի 3-ին ՀՀ Վճռաբեկ դատարանը ամբողջությամբ բավարարեց ԻԱԿ-ի վճռաբեկ բողոքը: Վճռաբեկ դատարանը բեկանեց ԻԱԿ-ն ընդդեմ «Երևանի կառուցապատման և ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՈԱԿ-ի գործով ՀՀ վարչական դատարանի կայացրած վճիռը և գործն ուղարկեց նույն դատարան նոր քննության: Հունիսի 20-ին ՀՀ վարչական դատարանը լիովին բավարարեց ԻԱԿ-ի հայցը: Դատարանը վճռեց ոչ իրավաչափ ճանաչել «Երևանի կառուցապատման և ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՈԱԿ-ի գործողությունները, պարտավորեցնել ՊՈԱԿ-ին հնգօրյա ժամկետում տրամադրելու պահանջվող տեղեկատվությունը և հօգուտ ԻԱԿ-ի բռնագանձել 24.000 դրամ՝ որպես ԻԱԿ-ի դատական ծախսերի փոխհատուցում:

ՊՈԱԿ-ը ՀՀ վարչական դատարանի վճիռը բողոքարկեց վերաքննության կարգով, սակայն 2011թ. նոյեմբերի 8-ին ՀՀ վերաքննիչ վարչական դատարանը մերժեց ՊՈԱԿ-ի վերաքննիչ բողոքը:

ՊՈԱԿ-ը վճռաբեկության կարգով բողոքարկեց նաև ՀՀ վերաքննիչ դատարանի մերժումը: ՀՀ Վճռաբեկ դատարանի 2012 թ. հունվարի 18-ի որոշմամբ՝ ուժի մեջ թողնվեց ՀՀ վարչական դատարանի 2011թ.-ի հունվարի 20-ի կայացրած որոշումը:

ԻԱԿ-ն ընդդեմ «Համալսարանականներ» համատիրության

Համատիրության ներկայացուցիչը կրկին չէր ներկայացել դատարան:

2012թ. փետրվարի 28-ին Երևանի Կենտրոն և Նորք Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանում շարունակվեց ԻԱԿ-ն ընդդեմ «Համալսարանականներ» համատիրության դատական գործը: Համատիրության ներկայացուցիչը կրկին չէր ներկայացել դատարան: Դատական նիստը հետաձգվեց մինչև ապրիլի 22-ը: Եվ եթե այդ օրը կրկին պատասխանող կողմը չներկայանա դատարան, դատական նիստը տեղի կունենա առանց համատիրության ներկայացուցչի:

Հիշեցնենք. որ 2011թ. դեկտեմբերի 8-ին կայացած նախնական դատական նիստը հետաձգվել էր, քանի որ համատիրության ներկայացուցիչը չէր ներկայացել դատական նիստին, ավելին՝ դատարանին չէր ներկայացրել անգամ հայցադիմումի պատասխանը:

Նշենք, որ Ինֆորմացիայի ազատության կենտրոնը 13 հունիսի 2011 թ. 143-ի 8 թվագրմամբ և 30 հունիսի 2011 թ. 145-ի 3 թվագրմամբ գրավոր հարցում է կատարել «Համալսարանականներ» համատիրության նախագահ պարոն Արմեն Թադևոսյանին՝ խնդրելով տրամադրել հետևյալ տեղեկությունները.

1. Ե՞րբ և որտե՞ղ է հրապարակվել «Համալսարանականներ» համատիրության այն ժողովի հայտարարությունը, որի ժամանակ սահմանվել են Ծարավ Աղբյուրի 55/5 շենքի սպասարկման գումարների չափերը:
2. Ե՞րբ և որտե՞ղ է տեղի ունեցել համատիրության նշված ժողովը և համատիրության քանի՞ անդամ է մասնակցել այդ ժողովին:
3. Խնդրում ենք տրամադրել համատիրության այն նիստի արձանագրության պատճեն, որի ընթացքում սահմանվել են Ծարավ Աղբյուրի 55/5 շենքի սպասարկման գումարների չափերը:

4. Խնդրում ենք տրամադրել նաև համատիրության այն որոշման պատճենը, որով սահմանվել են Ծարավ Աղբյուրի 55/5 շենքի սպասարկման գումարների չափերը:

5. Որո՞նք են սպասարկման գումարների գնագոյացման հիմքերը, համաձայն որոնց սահմանվել են վերոնշյալ գումարների չափերը: Խնդրում ենք տրամադրել յուրաքանչյուր ծառայության դիմաց հաշվարկված գումարի չափերը առանձին առանձին և դրանց համապատասխան հիմքերը:

6. Խնդրում ենք տրամադրել 2011թ. հունիսի 14-ի դրությամբ համատիրության և մասնավոր ընկերությունների կամ անհատների հետ Ծարավ Աղբյուրի 55/5 շենքի աղբահանության, շենքի մուտքերի և հարակից տարածքների մաքրության, արտաքին լուսավորության, աստիճանավանդակների և միջանցքների լուսավորության, վերելակների պահպանման և այլ ծառայությունների մատուցման համար կնքված պայմանագրերի պատճենները:

7. Խնդրում ենք տրամադրել «Համալսարանականներ» համատիրության 2011 թ. բյուջեի պատճեն:

Սակայն ԻԱԿ-ի հարցումները մնացել են անպատասխան:

ԻԱԿ-ը դիմել է դատարան՝ պահանջելով պարտավորեցնել «Համալսարանականներ» համատիրությանը հնգօրյա ժամկետում տրամադրել հայցվող տեղեկատվությունը, ինչպես նաև պարտավորեցնել «Համալսարանականներ» համատիրությանը հայցվող տեղեկատվությունը հրապարակել համատիրության համար մատչելի վայրում:

Հայցադիմումին կարող եք ծանոթանալ ԻԱԿ-ի կայքում՝ <http://foi.am/hy/news/item/917/>:

«Համալսարանականներ» համատիրությունը ընդհատակում է գործում

ՀՀ վարչական դատարանը 3 ամիս շարունակ փնտրում է «Համալսարանականներ» համատիրության նախագահ Արմեն Թադևոսյանին՝ դատական նիստի մասին ծանուցագիր հանձնելու համար:

Սակայն «Համալսարանականներ» համատիրությունն ու նրա նախագահը, պարզվում է, ընդհատակում են գործում: Նրանց գործունեության հասցեն գրացված չէ ՀՀ որևէ տեղեկատուում: Բոլոր հնարավոր հասցեներով դատարանի ուղարկած ծանուցագրերը ետ են վերադարձվել հասցեատիրոջը չհայտնաբերելու պատճառով:

Իսկ 2011թ. նոյեմբերի 11-ին համատիրության նախագահ Արմեն Թադևոսյանի դեմ դատական հայց է ներկայացրել Ինֆորմացիայի ազատության կենտրոնը տեղեկատվություն չտրամադրելու և գաղտնի աշխատելու համար: Մասնավորապես, կենտրոնը տեղեկություններ է պահանջել Ծարավ Աղբյուրի 55/5 շենքի վարձավճարների գնագոյացման, սպասարկման գումարների չափի, սպա-

սարկման գումարների գնագոյացման հիմքերի, «Համալսարանականներ» համատիրության 2011 թ. բյուջեի պատճեն և համատիրության գործունեության վերաբերյալ այլ տեղեկություններ: ԻԱԿ-ը դատական հայցով պահանջում է պարտավորեցնել «Համալսարանականներ» համատիրությանը հնգօրյա ժամկետում տրամադրել հայցվող տեղեկատվությունը, ինչպես նաև պարտավորեցնել «Համալսարանականներ» համատիրությանը հայցվող տեղեկատվությունը հրապարակել հանրության համար մատչելի վայրում:

Հիշեցնեք, որ հենց այս համատիրությունն է կոչված սպասարկել ՀՀ նախագահի բարձր հովանուներքո կառուցված, ԵՊՀ դասախոսների համար նախատեսված Ծարավ Աղբյուրի 55/5 շենքը:

ԻԱԿ-ն ընդդեմ «ՓՄՁ Ներդրումներ» ՈւՎԿ ՓԲԸ-ի

Մարտի 2-ին տեղի ունեցած դատական նիստի ժամանակ դատաքննությունն ավարտվեց, իսկ մարտի 15-ին հրապարակվեց վճիռը. դատարանը մերժեց ԻԱԿ-ը հայցը:

Ինֆորմացիայի ազատության կենտրոնը դիմել է դատարան՝ խնդրելով պարտավորեցնել «ՓՄՁ Ներդրումներ» ունիվերսալ վարկային կազմակերպություն փակ բաժնետիրական ընկերությանը տրամադրել հայցվող տեղեկատվությունը, ինչպես նաև վարկային կազմակերպության տնօրենին ենթարկել վարչական պատասխանատվության՝ 50.000 ՀՀ դրամի չափով:

2011թ.-ի նոյեմբերի 11-ին «Անկախ» շաբաթաթերթը դիմել էր «ՓՄՁ Ներդրումներ» ՓԲԸ-ին՝ խնդրելով տեղեկություններ ՈւՎԿ-ի կողմից ֆինանսավորված ֆիզիկական և իրավաբանական անձանց և ֆինանսավորման չափերի մասին: Ի պատասխան շաբաթաթերթի հարցմանը՝ «ՓՄՁ Ներդրումներ» ՓԲԸ-ն պատասխանել էր մերժմամբ՝ հայտնելով, որ խնդրվող տեղեկությունները համարվում են բանկային գաղտնիք: Նշենք, որ 11.11.2011թ.-ի հարցմամբ խնդրված տեղեկությունները վերաբերել են պետական միջոցներից տրամադրված ֆինանսավորմանը: Մերժում ստանալով՝ շաբաթաթերթը դիմել էր ԻԱԿ-ին:

ԻԱԿ-ը 2011 թ.-ի նոյեմբերի 22-ին գրավոր հարցում էր կատարել «ՓՄՁ Ներդրումներ» ՈւՎԿ ՓԲԸ-ի տնօրեն Արթուր Բադալյանին՝ նշելով, որ խնդրվող տեղեկությունները վերաբերում են պետական միջոցներին և խնդրել տրամադրել հետևյալ տեղեկությունները.

1. «ՓՄՁ Ներդրումներ» ՈւՎԿ ՓԲԸ-ն, ստեղծման օրվանից մինչև վերջին ամփոփման օրն ընկած ժամանակահատվածում քանի՞ իրավաբանական և ֆիզիկական անձի է ֆինանսավորել «ՓՄՁ Ներդրումներ» ՈւՎԿ-ին տրամադրված պետական միջոցներից,
2. Որո՞նք են այդ իրավաբանական և ֆիզիկական անձիք (նշել ամբողջական անունները),
3. «ՓՄՁ Ներդրումներ» ՈւՎԿ-ին տրամադրված պետական միջոցներից որքա՞ն միջոցներ են

հատկացվել յուրաքանչյուր իրավաբանական և ֆիզիկական անձին:

Ի պատասխան վերոնշյալ հարցման՝ ՈւՎԿ-ն ներկայացրել էր մասնակի պատասխան: Նաև, կրկին անգամ ՈւՎԿ-ն հղում էր կատարել առևտրային գաղտնիքին (բանկային գաղտնիք), առանց մանրամասնելու, թե կոնկրետ ՀՀ օրենքի որ դրույթով է ԻԱԿ-ի խնդրած տեղեկությունը համարվում գաղտնիք:

2011թ.-ի դեկտեմբերի 23-ին Ինֆորմացիայի ազատության կենտրոնը հայց ներկայացրեց Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին՝ խնդրելով պարտավորեցնել «ՓՄՁ Ներդրումներ» ունիվերսալ վարկային կազմակերպություն փակ բաժնետիրական ընկերությանը տրամադրել հայցվող տեղեկատվությունը, ինչպես նաև վարկային կազմակերպության տնօրենին ենթարկել վարչական պատասխանատվության՝ 50.000 ՀՀ դրամի չափով:

Դատական առաջին նիստը տեղի ունեցավ փետրվարի 27-ին Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանում: Նախնական դատական նիստի ժամանակ ԻԱԿ ներկայացուցիչը պնդեց հայցապահանջը, և գործը մտավ դատաքննության փուլ: Մարտի 2-ին կայացած դատական նիստի ժամանակ դատաքննությունն ավարտվեց, վճիռը հրապարակվեց մարտի 15-ին. դատարանը մերժեց ԻԱԿ-ը հայցը՝ գտնելով, որ պահանջվող տեղեկատվությունը առևտրային գաղտնիք է:

Գործի նյութերին կարող եք ծանոթանալ ԻԱԿ-ի ինտերնետային կայքի՝ www.foi.am, Ռազմավարական դատավարություն բաժնի, Դատական գործեր ենթաբաժնում:

Արտակ Ձեյնալյանի և Արայիկ Ղազարյանի դիմումը Սահմանադրական դատարան

2012թ.-ի մարտի 6-ին ՀՀ Սահմանադրական դատարանը քննեց իրավապաշտպան Արտակ Ձեյնալյանի և փաստաբան Արայիկ Ղազարյանի դիմումը «Պետական գաղտնիքի մասին» ՀՀ օրենքի 8, 12-րդ հոդվածների դրույթները հակասահմանադրական ճանաչելու վերաբերյալ:

ՀՀ Սահմանադրական դատարանը 2012թ.-ի մարտի 3-ին կայացրած որոշմամբ մասնակիորեն բավարարեց իրավապաշտպան Արտակ Ձեյնալյանի և փաստաբան Արայիկ Ղազարյանի դիմումը՝ «Պետական գաղտնիքի մասին» ՀՀ օրենքի 8, 12-րդ հոդվածների դրույթները ՀՀ Սահմանադրությանը հակասող ճանաչելու վերաբերյալ:

Դիմումի նախապատմությունը սկսվել էր 2010թ.-ի փետրվարի 10-ին, երբ «Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակ» ՀԿ-ն, որի ներկայացուցիչներն են Արտակ Ձեյնալյանը և Արայիկ Ղազարյանը, դիմել էին ՀՀ Պաշտպանության նախարարությանը՝ խնդրելով տեղեկություններ ՀՀ զինված ուժերում 2009թ.-ին մահացած ժամկետային և պայմանագրային զինծառայողների քանակի վերաբերյալ, ինչպես նաև՝ մահացած զինծառայողների անունները, ազգանունները և հասցեները:

ՀՀ Պաշտպանության նախարարությունը հարցմանը պատասխանել էր մերժումով՝ նշելով, որ խնդրվող տեղեկատվությունը գաղտնի է համաձայն ՀՀ Պաշտպանության նախարարի հրամանով գործողության մեջ դրված «ՀՀ ՊՆ գաղտնագրման ենթակա տեղեկությունների ընդլայնված գերատեսչական ցանկ»-ի:

«Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակ»-ը նորից տեղեկություն ստանալու հարցում էր ուղարկել նախարարությանը՝ այս անգամ խնդրելով ՀՀ Պաշտպանության նախարարի վերոնշյալ հրամանը և հրամանով գործողության մեջ դրված «ՀՀ ՊՆ գաղտնագրման ենթակա տեղեկությունների ընդլայնված գերատեսչական ցանկ»-ը:

Այս հարցմանը նախարարությունը նույնպես մերժել էր՝ նշելով, որ ըստ «Պետական և ծառայողական գաղտնիքի մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 3-րդ

մասի դ. ենթակետի՝ ՀՀ կառավարությունը մշակում և հաստատում է պետական գաղտնիքների շարքին դասվող տեղեկատվությունների ցանկը:

«Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակ»-ը նախարարության այս մերժումը բողոքարկել էր ՀՀ Վարչական դատարան: Սակայն Վարչական դատարանը կազմակերպության հայցը չէր բավարարել: Դատարանը նաև գտել էր, որ «Պետական և ծառայողական գաղտնիքի մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածը չի հակասում ՀՀ Սահմանադրությանը, այսինքն, իր վրա էր վերցրել ՍԴ-ի լիազորությունները: Վարչական դատարանի վճիռը բողոքարկվել էր վերաքննության կարգով, սակայն ՀՀ Վերաքննիչ վարչական դատարանը վերաքննիչ բողոքը մերժել էր: Արդյունքում, «Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակ» ՀԿ-ն Արտակ Ձեյնալյանի և Արայիկ Ղազարյանի ներկայացմամբ դիմել էր ՀՀ Սահմանադրական դատարան՝ «Պետական գաղտնիքի մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 4-րդ մասի «գ» ենթակետը և 12-րդ հոդվածի 6-րդ և 7-րդ կետերը հակասահմանադրական ճանաչելու համար:

2012թ.-ի մարտի 3-ին կայացրած որոշմամբ ՀՀ Սահմանադրական դատարանը մասնակիորեն բավարարեց Արտակ Ձեյնալյանի և Արայիկ Ղազարյանի դիմումը: Դատարանը գտավ, որ «Պետական գաղտնիքի մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 4-րդ մասի «գ» ենթակետը և 12-րդ հոդվածի 6-րդ կետը չեն հակասում Սահմանադրությանը, իսկ 12-րդ հոդվածի 7-րդ կետի այն դրույթը, թե գաղտնագրման ենթակա տեղեկությունների գերատեսչական ցանկերը գաղտնագրվում են և հրապարակման ենթակա չեն, հակասում է ՀՀ Սահմանադրությանը և անվավեր է, այնքանով, որքանով չի վերաբերում գաղտնագրման ենթակա կոնկրետ տեղեկության:

Տեղեկատվական ցուցատախտակները՝ հրապարակայնության ապահովման մատչելի միջոց

Հայաստանի 53 քաղաքային և գյուղական համայնքներում Ինֆորմացիայի ազատության կենտրոնի կողմից 2007-2012թթ. տեղադրվել է 246 տեղեկատվական ցուցատախտակ:

Տեղեկատվության ազատության ոլորտում ամենակարևորն այն է, որ պետական մարմինները իրենց սեփական նախաձեռնությամբ հրապարակեն հանրության համար կարևոր տեղեկություններ: Այս նպատակով ԻԱԿ-ը՝ ԱՄՆ ՄՁԳ աջակցությամբ, գյուղական և քաղաքային համայնքներին տրամադրում է տեղեկատվական ցուցատախտակներ՝ համայնքին առնչվող պարտադիր հրապարակման ենթակա տեղեկությունները փակցնելու համար: Այս տեղեկատվական ցուցատախտակները տեղական ինքնակառավարման մարմինների համար պարտադիր հրապարակման ենթակա տեղեկությունները մատչելի դարձնելու ձևով, ոչ ծախսատար և արդյունավետ միջոց են:

Տեղեկատվական ցուցատախտակների վրա փակցվող տեղեկատվությունը բաղկացած է երկու մասից՝ փոփոխվող և անփոփոխ: Անփոփոխ մասում ներկայացված են «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի հիմնական դրույթները, տեղեկություններ, թե ինչպես կարող է քաղաքացին իրականացնել իր՝ տեղեկություն ստանալու իրավունքը, ինչպես նաև տեղեկություն ստանալու հարցման օրինակելի ձևը:

Տեղեկատվության ազատության գրքեր՝ դատապարտյալներին

Փետրվարի 2-ին Ինֆորմացիայի ազատության կենտրոնը, ՀՀ արդարադատության նախարարության կազմակերպած «Գիրք դատապարտյալներին» ակցիայի շրջանակներում, տեղեկատվության ազատությանն առնչվող 100-ից ավելի գիրք նվիրեց դատապարտյալներին: Նշենք, որ ՀՀ արդարադատության նախարար Հրայր Թովմասյանի նախաձեռնությամբ, ՀՀ ար-

Ցուցատախտակի փոփոխվող մասում ներկայացվում են այնպիսի անհրաժեշտ տեղեկություններ, ինչպիսիք են համայնքի բյուջեն, բյուջեի կատարման հաշվետվությունը, համայնքի ղեկավարի և ավագանու որոշումների պատճենները, համայնքի ավագանու նիստերի վերաբերյալ տեղեկատվություն և այլն: Ցուցատախտակի այս հատվածը պարբերաբար պետք է թարմացվի համայնքի ղեկավարության կողմից:

Գործընթացի շրջանակներում ԻԱԿ նախագահի և համայնքների ղեկավարների միջև կնքվում է հուշագիր, որով համայնքի ղեկավարները պարտավորվում են պարբերաբար (առնվազն ամիսը մեկ անգամ) թարմացնել ցուցատախտակներում հրապարակվող տեղեկատվությունը, ինչպես նաև ապահովել համայնքի բնակիչների տեղեկացվածությունը ցուցատախտակների մասին: Համայնքի ղեկավարներ պարտավորվել են ապահովել ցուցատախտակների օգտագործումը բացառապես հանրային նպատակներով, այսինքն, պետք է խստորեն բացառվի գովազդի տեղադրումը դրանց վրա:

Մինչև 2013թ.-ը Հայաստանի 4 համայնքներում ևս կտեղադրվի 24 տեղեկատվական ցուցատախտակ:

ԻԱԿ-ը հրապարակում է Մաշտոցի պուրակի խնդրահարույց փաստաթղթերը

Երևանի քաղաքապետարանը լիարժեք պատասխանել է Մաշտոցի պուրակի շինարարության հետ կապված Ինֆորմացիայի ազատության կենտրոնի 20.02.2012թ.-ի հարցմանը՝ տրամադրելով ծավալուն պատասխան՝ 3 էջանոց գրություն 28 էջ կից փաստաթղթերով:

Փետրվարի 20-ին Ինֆորմացիայի ազատության կենտրոնը պաշտոնապես դիմել է Երևանի քաղաքապետ Տարոն Մարգարյանին՝ խնդրելով տրամադրել հետևյալ տեղեկությունները.

1. Մինչ հողահատկացումը ի՞նչ կարգավիճակ է ունեցել Երևան քաղաքի Մաշտոցի այգու տարածքը, և արդյոք փոխվել է տարածքի կարգավիճակը հողահատկացումից հետո:
2. Ե՞րբ են կատարվել հողահատկացումները, որքա՞ն մակերեսով, ի՞նչ նպատակով և որքա՞ն ժամկետով:
3. Ո՞ւմ կամ ո՞ր կազմակերպությանն (կազմակերպություններին) են կատարվել հողահատկացումները:
4. Ե՞րբ է տրվել վերոնշյալ տարածքում շինարարության թույլտվությունը և ի՞նչ հիմքով:
5. Խնդրում ենք տրամադրել հողահատկացման, շինարարական թույլտվության և ճարտարապետահատակագծային առաջադրանքի պատճենները:
6. Արդյոք իրականացվել է հասարակության ծանուցում և քննարկում տվյալ հանրային տարածքը առևտրային գոտու վերածելու վերաբերյալ: Եթե այո, ապա՝ ե՞րբ և ո՞ւմ մասնակցությամբ:
7. Խնդրում ենք հայտնել, թե նման շինարարության թույլտվություն տրամադրելիս, հաշվի առնվել է «Քաղաքաշինություն. հատակագծում և կառուցապատում քաղաքային և գյուղական բնակավայրերի» ՍՆԻՊ 2.07.01-89 -ի

4.12 կետի 4-րդ աղյուսակի կանոնը (քաղաքաշինական նորմը), ըստ որի շինության արտաքին պատը ծառի բնից պետք է հեռու լինի 5 մետր:

Փետրվարի 28-ին Երևանի քաղաքապետարանը պատասխանեց ԻԱԿ-ի հարցմանը՝ տրամադրելով ծավալուն պատասխան՝ 3 էջանոց գրություն 28 էջ կից փաստաթղթերով:

Տրամադրված փաստաթղթերի վերլուծությունից պարզ է դառնում, որ Մաշտոցի պուրակի տարածքում հողահատկացումներ կատարվել են 2001-2006թթ.. ընթացքում՝ 5-25 տարի ժամկետներով՝ Երևանի նախկին քաղաքապետեր Ռոբերտ Նազարյանի և Երվանդ Ջաքարյանի կողմից: Միայն մի հողահատկացում է կատարվել 2011թ.-ին՝ 12.56քմ մակերեսով՝ 5 տարի ժամկետով, «Արտակ Չարությունյան» ԱԶ-ին:

Իսկ թե ինչո՞ւ են 10 տարի առաջ հատկացված հողատարածքում միայն այժմ կատարվում շինարարական աշխատանքներ և ինչո՞ւ է խնդիրը կապվում Աբովյան փողոցի տարհանված տաղավարների հետ, անհասկանալի է:

Քաղաքապետին ուղղված հարցումը և հարցման պատասխանը տեղադրված են Givemeinfo.am կայքում՝ <http://www.givemeinfo.am/hy/case/692/>:

Տեղեկատվական վեճերի խորհրդի փորձագիտական եզրակացությունը ՀՀ քաղաքացի Գուրգեն Աղաջանյանն ընդդեմ «Ժողովուրդ» օրաթերթի հայցի վերաբերյալ

«Ժողովուրդ» օրաթերթի խմբագրությունը դիմել էր Տեղեկատվական վեճերի խորհրդին՝ խնդրելով կարծիք հայտնել օրաթերթի դեմ ՀՀ քաղաքացի Գուրգեն Աղաջանյանի ներկայացրած հայցի կապակցությամբ: Տեղեկատվական վեճերի խորհուրդը քննելով սույն գործը՝ հրապարակում է իր մասնագիտական եզրակացությունը:

06/08/2011թ. «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրությունը փոստային ծառայության միջոցով ստացել է անստորագիր նամակ, որը պարունակում էր տեղեկություններ ՀՀ ԿԱ պետական գույքի կառավարման վարչության նախկին պետ Կարինե Կիրակոսյանի և նրա տեղակալ Աշոտ Մարկոսյանի կողմից կատարված չարաշահումների մասին: Ծրարի վրա նշվել են ուղարկողի հետևյալ տվյալները. ուղարկող՝ Գուրգեն Աղաջանյան, հասցեն՝ Տիգրան Մեծի 4, ք. Երևան: Նամակն ուղարկվել է հետադարձ ծանուցմամբ, որտեղ հետադարձ հասցեն նշվել է Պետական գույքի կառավարման վարչության հասցեն: Թերթը պարզաբանումներ ստանալու նպատակով խոսել է Կարինե Կիրակոսյանի հետ եւ 09/08/2011թ. համարում հրապարակել «Գալուստի որդուց պահանջում են» վերնագրով հոդված, որում ներկայացվել են նամակում շարադրված փաստերը և Կարինե Կիրակոսյանի պատասխանն այն մասին, որ նամակում նշված փաստերն իրականությանը չեն համապատասխանում և նամակագիրն այդ նամակը գրել է չարությունից դրդված, քանի որ մի քանի տարի առաջ կատարված չարաշահումների պատճառով նրան հեռացրել են աշխատանքից:

Հաջորդ օրը Գուրգեն Աղաջանյանը ներկայացել է խմբագրություն և պնդել, որ ինքը նամակի հեղինակը չէ, որ նշված փաստերի վերաբերյալ ինքը նամակ չի պատրաստել և որևէ մեկին չի ուղարկել: Այնուհետև ներկայացրել է գրավոր պատասխան և պահանջել այն հրապարակել թերթում որպես հերքում: «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրությունը հրաժարվել է տպել հերքման տեքստը՝ պատճառա-

բանելով, որ տեքստում չէր պահպանված հերքման տեքստի բովանդակային պահանջը:

Գուրգեն Աղաջանյանը դիմել է դատարան ընդդեմ օրաթերթի և պահանջել տպագրել հերքում՝ 804 հազար դրամ փոխհատուցում (500,000 ՀՀ դրամ գրապարտության, 300,000 ՀՀ դրամ փաստաբանի վարձատրության և 4,000 ՀՀ դրամ վճարված պետական տուրքի դիմաց):

- **Տեղեկատվական վեճերի խորհուրդը գտնում է,** որ թեև իրավական առումով լրատվամիջոցը իրավունք ունի հրապարակել վիճահարույց նամակի բովանդակությունը, սակայն պրոֆեսիոնալ բարեխղճության տեսանկյունից նպատակահարմար կլիներ նամակը հրապարակել՝ առանց նշելու հեղինակի անունը (որպես անանուն աղբյուրից ստացված տեղեկատվություն) կամ հեղինակի անունը տալով միաժամանակ նշվեր, որ լրատվամիջոցը վստահ չէ, թե ով է նամակի իրական հեղինակը, քանի որ հնարավոր չի եղել ստուգել նամակագրի ինքնությունը: Քանի որ դա չի արվել, ապա նյութի հրապարակումից հետո ստեղծված իրավիճակում անհրաժեշտ էր քաղաքացուն տրամադրել հերքման կամ պատասխանի հնարավորություն՝ այնքանով, որքանով դա անհրաժեշտ էր նշելու համար, որ Գուրգեն Աղաջանյանը չէր վիճահարույց նամակի հեղինակը:
- **Խորհուրդը նաև գտնում է,** որ հայցվորի նյութական փոխհատուցման պահանջներն անհամաչափ են և արդարացված չեն, քանի որ չեն ծառայում իրենց բուն նպատակին և որպես այդպիսին անհրաժեշտ չեն ժողովրդավարական հասարակարգում:

Տեղեկատվական վեճերի խորհուրդ

Փորձագիտական եզրակացությունն ամբողջությամբ կարող եք կարդալ ԻԱԿ-ի ինտերնետային կայքում՝ <http://www.foi.am/hy/news/item/>

Պաշտոնական կայքերին ներկայացվելու են նոր պահանջներ

ՀՀ Կապի և տրանսպորտի նախարարության կայքում տեղադրված է «Ինտերնետ ցանցում պետական մարմինների պաշտոնական կայքերին ներկայացվող պահանջների մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը, որով նախատեսվում է կանոնակարգել և միասնականացնել պաշտոնական ինտերնետային կայքերը: Նախագիծը տեղեկանում էնք, որ որոշման հիմնական նպատակը պետական կայքերին հստակ պահանջներ սահմանելն է:

Փառանձնեմ Վարդանյան

Որոշման ընդունումից հետո բոլոր ՀՀ պաշտոնական կայքերը պետք է համապատասխանեն այստեղ տեղ գտած պահանջներին, որոնք ինչպես հաջորդող տեքստում է նշված «տեղեկատվական և տեխնոլոգիական բաղկացուցիչների պահպանմանը և ապահովմանը, տեխնիկական և կազմակերպչական բնույթի, անվտանգության ապահովմանն» ուղղված պահանջներ են:

Ինչպես մեզ հետ զրույցում հայտնեց Տրանսպորտի և կապի նախարարության կապի և տեղեկատվացման վարչության պետ Նորայր Ստեփանյանը՝ նախագիծը հիմնականում կոչված է համակարգելու, նույնականացնելու պետական մարմինների կայքերը և արտաքին տեսքի, և տեխնիկական առումով, ինչը հնարավորություն կտա ավելի հեշտ կազմակերպելու անվտանգության հետ կապված հարցերը: Ն. Ստեփանյանը նշեց, որ նախագիծը մշակելիս հիմնականում հաշվի են առնվել Մոլդովայի և Ղրղզստանի փորձերը:

Այնուհանդերձ, մասնագետները միանշանակորեն չեն ընդունում նախագծում տեղ գտած պահանջները: Վիճահարույց մոտեցումները հիմնականում վերաբերում են միասնական դիզայնի և կայքերի անվտանգության հարցերին:

«Հելիքս Կոնսալտինգ» ընկերության ղեկավար Արամ Մխիթարյանի համոզմամբ՝ այս փաստաթուղթը ոչ թե պետք է կանոնակարգի, այլ խորհրդատվական բնույթ կրի: «Փաստաթղթում շատ դրական է, որ նշված է՝ ինչ տեխնիկական ստանդարտների պետք է համապատասխանեն պաշտոնական կայքերը՝ W3C (Համաշխարհային Գլոբալ Ցանցի Կոնսորցիում), WAI (Վեբ կայքերի մատչելիության նախաձեռնություն) ստանդարտները, վերջինը նախատեսված է սահմանափակ հնարա-

վորություններով մարդկանց հասանելիությունը ապահովելու համար, ինչին այժմ Հայաստանում շատ քիչ կայքեր են համապատասխանում: Սա շատ լավ նախաձեռնություն է, բայց այն կբերի նրան, որ փաստաթուղթն ընդունելուց հետո, պետք կլինի բոլոր պետական կայքերը վերազինել, որպեսզի այդ ստանդարտներն ապահովվեն: Մի կայքում կարող է մի քանի օրվա աշխատանք լինել, մյուսում՝ ամիսների, որովհետև բոլոր այն կայքերը, որոնք պատրաստվել են հին տեխնոլոգիաներով, այս ստանդարտներին չեն համապատասխանում:

Բացասական են համարում այն, որ փաստաթուղթը նաև պետք է կանոնակարգի կայքերի արտաքին տեսքը, կառուցվածքը, բաժինները, որովհետև, եթե դա կարելի է անել օրինակ նախարարությունների համար, որոնք քիչ թե շատ նման կառուցվածք ունեն, ապա կան պետական կառույցներ, որոնք այլ կառուցվածք ունեն և չեն կարող այդ ստանդարտին ենթարկվել: Օրինակ հենց egov.am-ը, որը էլեկտրոնային ծառայությունների պորտալ է, ունի բոլորովին այլ կառուցվածք, լուծում է բոլորովին այլ խնդիրներ և երբեք չի կարող համապատասխանեցվել այդ ստանդարտին»:

PanARMENIAN Մեդիա ընկերության գործադիր տնօրեն, SS մասնագետ Արմեն Ազարյանն ասում է, որ չկա աշխարհում որևէ պետություն, որը ընդունել է նմանատիպ օրենսդրական ակտ և համարում է, որ այն հիանալիորեն գործում է: «Այդ պատճառով մենք չպետք է վերցնենք դրսի փորձը և իմպլիմենտացիա անենք ու հարմարեցնենք մեզ, քանի որ այս ոլորտում ամեն ինչ շատ արագ է փոփոխվում և պահանջներն ու միջավայրները խիստ տարբեր են»:

Ըստ Արմեն Ազարյանի՝ դաշտը կարգավորող օրենսդրական ակտ միանշանակ պետք է, բայց դա պետք վերաբերի օրինակ նրան, որ կայքը (սերվերը) գտնվի Հայաստանում, որ լինեն հակավիրուսներ և այլն: Իսկ մնացած հարցերը կարգավորելու համար առավել նպատակահարմար է ստեղծել մասնավոր կազմակերպություն, որտեղ կլինեն անվտանգության և այլ ոլորտների մասնագետներ, որոնք կաշխատեն կայքերի վրա՝ ամեն կայքի համար առանձին ստեղծելով աշխատանքային պլան և կիեռեն, քանի որ դրանցից յուրաքանչյուրն ունի իր առանձնահատկությունները: Իսկ, թե ինչու պետք է այդ կառույցը լինի մասնավոր, Արմեն Ազարյանը բացատրում է նրանով, որ այս տեսակի մասնագետների համար պետությունը դեռևս բավականաչափ գումարներ չունի: «Իսկ պետական համապատասխան կառույցի գործառույթը կլինի կապ ապահովել մասնագետների և պետության միջև», - նշում է Ա. Ազարյանը:

Նախագծի մշակման գործընթացում ներառված են եղել «Ինտերնետ հանրություն» ՀԿ-ի մասնագետները, սակայն ՀԿ-ի փոխնախագահ Գրիգոր Սաղյանն այժմ է ներկայացնում նախագծի հանդեպ ունեցած իր հիմնական առարկությունները. անվտանգության հարցերը պետք է առանձնացնել, դիզայնին վերաբերող կետերը թեթևացնել և անպայման անհրաժեշտ է նշել, թե պետությունը վրա ինչ ազդեցություն է ունենալու և նշել ֆինանսավորման աղբյուրները: «Նախագիծը ներառում է ցանցային և անվտանգության այնպիսի հարցեր, որոնց համար պետք են համապատասխան մասնագետներ, իսկ նման կադրերի ֆինանսավորման հարցը փաստաթղթում նշված չէ: Ինչպես նաև փաստաթղթում նշված չէ այն ծախսերի մասին, որոնք պետք են կայքերը վերադիզայնավորելու համար, քանի որ կայքերի մեծ մասը չի համապատասխանում տվյալ ստանդարտներին»- նշում է հԿ-ի փոխնախագահը:

Որոշման նախագծում տեղ գտած պաշտոնական կայքերի բովանդակությանն ուղղված պահանջները գրեթե ամբողջությամբ ողջունելի են մեդիա դաշտում գործող հասարակական կազմակերպությունների համար: Ինֆորմացիայի ազատության կենտրոնի փորձագետ Լիանա Դոյրոյանը խիստ դրական է գնահատում այն, որ այս որոշմամբ «ՏԱ մասին» ՀՀ օրենքում նշված պարտադիր հրապարակման ենթակա պաշտոնական տեղեկատվու-

թյունը պետք է հրապարակվի տվյալ գերատեսչության կայքում:

«Պետական կայքերն այսօր աշխարհում կիրառվում են որպես պաշտոնական տեղեկատվության պրոակտիվ տրամադրման ամենարդյունավետ գործիքներից մեկը: Չնայած Տեղեկատվության ազատության մասին ՀՀ օրենքը հստակ նշում է պաշտոնական տեղեկատվության պարտադիր հրապարակման պահանջները, կարգը, սակայն այն դեռևս չի կարգավորում էլեկտրոնային պաշտոնական տեղեկատվության տրամադրման մեխանիզմները: Այս որոշմամբ կլուծվի խնդիրը, քանի որ այսօր գործող պաշտոնական կայքերի մեծ մասը չեն համապատասխանում ՏԱ մասին օրենքի պահանջներին», - նշում է ԻԱԿ փորձագետը:

Պաշտոնական կայքերի բովանդակությանը վերաբերող մեկ այլ կարևոր հանգամանք է նշում նաև «Հելիքս Կոնսալտիզ» ընկերության ղեկավար Արամ Մխիթարյանը. «Ամենակարևոր բանը, որը ես բարձր եմ գնահատում, այն է, որ նախագծում հստակ նշված է, թե ինչ բովանդակություն պետք է պարունակի պաշտոնական կայքը: Օրինակ այս կետը՝ «Յուրաքանչյուր պաշտոնական կայքում տեղեկատվության հասանելիության ապահովման, արդիականացման և տեղադրման գործընթացի կազմակերպման նպատակով պետական կառավարման մարմնի ղեկավարի հրամանով, որպես պատասխանատու հանդես է գալիս կառուցվածքային ստորաբաժանում կամ կոնկրետ պաշտոնատար անձ» բավականին հեշտացնում է աշխատանքը տվյալ գերատեսչության հետ, և կոնկրետ պահանջ է դրվում կայքի բովանդակության համար ունենալ կոնկրետ պատասխանատու»:

«Խոսքի ազատության պաշտպանության կոմիտե»-ի իրավաբան Օլգա Սաֆարյանի կարծիքով, եթե նախագիծը հաստատվի ու իսկապես գործի, ապա շատ կնպաստի, որ պետական մարմիններն ավելի հետևողական լինեն իրենց կայքերի աշխատանքները լավացնելու հարցում: Չնայած որ կոմիտեի կողմից անցկացվող մոնիտորինգի արդյունքները ցույց են տալիս, որ ոլորտում արդեն իսկ կան դրական փոփոխություններ: «Սակայն, միևնույն է, այդ արդյունքները դեռևս գոհացուցիչ չեն. կայքերում տեղեկությունները կամ չկան, կամ էլ այնպես են ներկայացված, որ հարմար չեն գտնելու համար», - ասում է Օլգա Սաֆարյանը:

Իսկ «Լրագրողներ հանուն ապագայի» հի-ի նախագահ Սուրեն Դեհերյանը պաշտոնական կայքերի համար շատ է կարևորում «մեկ ձեռագրի» առկայությունը. «Քաղաքացին հեշտությամբ պետք է կարողանա գտնել իրեն հուզող հարցի պատասխանը, այսինքն՝ պետական մարմինների հետ շփումները պետք է մաքսիմալ պարզեցվեն և հեշտացվեն քաղաքացիների համար»: Այսօր պետական կայքերի համար հիմնական խնդիրը նա համարում է հենց տեղեկատվական բաժինների բացակայությունը: Ըստ նրա՝ փաստաթղթում մոտեցումները բավականին լավն են և, եթե որոշումը գործի, ապա դրական փոփոխություններ կլինեն:

Ինչպես հավելեց Ինֆորմացիայի ազատության կենտրոնի փորձագետ Լիանա Դոյդոյանը, Կենտրոնը պատրաստել և ԶԶ կապի և տրանսպորտի նախարարությանն է ուղարկել որոշման նախագծում լրացումներ անելու առաջարկներ, օրինակ, կայքերում ներառել տեղեկատվության ազատությանը վերաբերող բաժիններ, որտեղ մարդկանց հստակ կներկայացվեն տեղեկատվության ազատության օրենսդրությունը, տեղեկություն ստանալու հարցման ձևանմուշը, մանրամասն ուղեցույց կտա, թե ինչ կարգով, ինչ ժամկետներում կարող են ստանալ իրենց անհրաժեշտ տեղեկությունները: «Մեր առաջարկով նման բաժին արդեն գործում է ԶԶ տարածքային կառավարման նախարարության կայքում, որը կարծում են առավել հեշտացնում է տեղեկություն ստանալու գործընթացը»:

Այնուհանդերձ, որոշման նախագիծը դեռևս քննարկման փուլում է, և շահագրգիռ կազմակերպություններին, ընկերություններին կառաջարկեինք ծանոթանալ և իրենց մասնագիտական կարծիքներն, առաջարկները հայտնել նախագծի վերաբերյալ, որպեսզի հետագայում, ինչպես շատուշատ օրինագծերի դեպքում, դրա ընդունումից հետո չկանգնենք լուրջ խնդիրների առջև:

Նախագծին կարող եք ծանոթանալ ԻԱԿ-ի կայքում՝ <http://www.foi.am/hy/articles/item/978/>:

Կուսակցությունները՝ տեղեկատվություն տնօրինողներ

Պարտավոր են արդյոք կուսակցությունները աշխատել հրապարակային, պարտավոր են արդյոք սեփական նախաձեռնությամբ հրապարակել կամ պահանջի դեպքում տրամադրել տեղեկություններ իրենց և իրենց գործունեության մասին: Այս հարցերին պատասխանելու համար պետք է անդրադառնալ տեղեկատվության ազատության վերաբերյալ ՀՀ օրենսդրությանը, սակայն նախ խոսենք միջազգային փաստաթղթերի մասին:

Եվրամիություն

Եվրամիությունը չունի որևէ կարգավորում, որը ազգային մակարդակում պարտավորեցնում է քաղաքական կուսակցություններին պատասխանել տեղեկատվություն ստանալու հարցումներին կամ սեփական նախաձեռնությամբ հրապարակել որոշակի տեղեկություններ: Սակայն Եվրամիությունը որոշակի պայմաններ է սահմանում Եվրոպայում գործող այն կուսակցությունների համար, որոնք դիմում են ԵՄ-ին՝ ֆինանսավորում ստանալու համար: Այսպես, 2003/2004թ.թ. ԵՄ կանոնակարգի 6-րդ հոդվածի համաձայն՝ դիմող կուսակցությունը ի թիվս այլ պայմանների, պարտավոր է նաև տարեկան հրապարակել իր եկամուտները և ծախսերը, ինչպես նաև իր ակտիվների և պարտավորությունների հայտարարագրերը, հրապարակել իր ֆինանսավորման աղբյուրները՝ նշելով դոնորների ցուցակը և յուրաքանչյուր դոնորից ստացված նվիրատվության չափը՝ բացառությամբ 500 Եվրոն գերազանցող նվիրատվությունները:

Միավորված ազգերի՝ կոռուպցիայի դեմ կոնվենցիա

ՄԱԿ-ի Կոռուպցիայի դեմ կոնվենցիան անդրադառնում է կուսակցությունների ֆինանսական թափանցիկությանը՝ 7-րդ հոդվածի 3-րդ կետով սահմանելով, որ. «Յուրաքանչյուր Մասնակից պետություն պետք է նաև քննարկի համապատասխան օրենսդրական և վարչական միջոցները, սույն Կոնվենցիայի նպատակների և իր ներքին օրենսդրության հիմնարար սկզբունքների համաձայն, ընտրովի պետական պաշտոններում թեկնածուների ֆինանսավորման և, որտեղ կիրառելի է, քաղաքական կուսակցությունների ֆինանսավորման թափանցիկությունը մեծացնելու համար»:

Կուսակցությունների և նախընտրական քարոզարշավի ֆինանսավորման ժամանակ կոռուպցիայի դեմ ընդհանուր կանոնների վերաբերյալ Եվրոպայի խորհրդի հանձնարարական

Առավել ամբողջական միջազգային փաստաթուղթ, որը քաղաքական կուսակցությունների լավ և թափանցիկ գործելակերպի ուղեցույց է սահմանում, Եվրոպայի խորհրդի (2003)4 հանձնարարականն է՝ կուսակցությունների և նախընտրական քարոզարշավի ֆինանսավորման ժամանակ կոռուպցիայի դեմ ընդհանուր կանոնների վերաբերյալ: Այս փաստաթուղթը ներառում է համապատասխան նախորդ հանձնարարականների տարրերը և հանձնարարում կոռուպցիայի դեմ պայքար մղող պետություններին վերլուծել այս հանձնարարականի կիրառումը: Թեև այս հանձնարարականը չի անդրադառնում քաղաքացիների՝ տեղեկություն ստանալու իրավունքին և տեղեկատվություն տնօրինողների կողմից թափանցիկության ապահովման պասիվ միջոցներին, ինչպիսին են տեղեկատվություն ստանալու հարցումները, սակայն հանձնարարականի մի շարք ընդհանուր կանոններ վերաբերում են տեղեկատվություն տնօրինողների սեփական նախաձեռնությամբ թափանցիկության ապահովմանը:

Տեղեկատվություն տնօրինողների սեփական նախաձեռնությամբ թափանցիկության ապահովման վերաբերյալ հանձնարարականի ընդհանուր կանոններն ամրագրում են, որ.

- Նվիրատվությունների յուրաքանչյուր տեսակ պետք է լինի հրապարակային, այլ ոչ թե գաղտնի (Հոդված 3.ա),
- Քաղաքական կուսակցությունների ստացած նվիրատվությունները պետք է հրապարակային լինեն հատկապես այն դեպքում, երբ դրանք գե-

րազանցում են սահմանված առավելագույն չափը (հոդված 3.bi),

- Պետությունները պետք է քաղաքական կուսակցություններից պահանջեն տարին առնվազն մեկ անգամ հրապարակել ֆինանսական հաշվետվությունները կամ առնվազն դրանց վերաբերյալ տեղեկանքները, և դրանք պետք է ներառեն տեղեկություններ նվիրատվությունների և ծախսերի վերաբերյալ (հոդված 13),
- Պետք է անկախ վերահսկողություն իրականացվի, որը կներառի տվյալներ հաշիվների հրապարակման մասին տեղեկություն (Հոդված 14):

Հանձնարարականի կանոններով սահմանված է նաև, որ համապատասխան հաշիվները պետք է հրապարակվեն (հոդված 11), այդ թվում՝ ներառվեն տեղեկություններ իրավաբանական անձանց կողմից տրված բոլոր նվիրատվությունների (հոդված 5.i) և քարոզարշավների բոլոր ծախսերի վերաբերյալ (հոդված 9):

ՀՀ օրենսդրություն

Սահմանադրության 7-րդ հոդվածն ամրագրում է կուսակցությունների՝ հրապարակային աշխատելու պարտականությունը, որի համաձայն. «Կուսակցություններն ապահովում են իրենց ֆինանսական գործունեության հրապարակայնությունը»: Սա նշանակում է, որ կուսակցությունների ֆինանսական գործունեությունը պետք է բաց և թափանցիկ լինի, հասարակության համար հասանելի լինեն կուսակցությունների ֆինանսական գործունեության վերաբերյալ տեղեկությունները:

Կուսակցությունների գործունեությունը կարգավորող հիմնական իրավական ակտի՝ “Կուսակցությունների մասին” ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 2-րդ կետն ամրագրում է, որ ի թիվս այլ սկզբունքների, կուսակցությունների գործունեությունը հիմնվում է նաև հրապարակայնության սկզբունքի վրա: Նույն հոդվածի 4-րդ կետի համաձայն՝ «Կուսակցությունները գործում են հրապարակայնորեն, նրանց հիմնադիր ու ծրագրային փաստաթղթերը հրապարակվում են համընդհանուր իրազեկման համար»:

«Կուսակցությունների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ կետն էլ սահմանում է, որ կուսակցության գործունեությունը ներկայացնող հիմնա-

կան փաստաթղթերը՝ կուսակցության կանոնադրությունը և ծրագիրը, որոնցում արտացոլվում են կուսակցության խնդիրներն ու նպատակներն, պետք է հրապարակվեն զանգվածային լրատվության միջոցներով:

Տեղեկատվության ազատության իրավունքի ոլորտը կարգավորող հիմնական իրավական ակտը «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքն է: Ուստի, անդրադառնալով այս օրենքին՝ պարզելու համար արդյոք կուսակցությունները համարվում են տեղեկատվություն տնօրինողներ:

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքը սահմանում է, որ տեղեկատվություն տնօրինող են համարվում տեղեկություններ ունեցող պետական և տեղական ինքնակառավարման մարմինները, պետական հիմնարկները, բյուջեներից ֆինանսավորվող կազմակերպությունները, ինչպես նաև հանրային նշանակության կազմակերպությունները և դրանց պաշտոնատար անձինք: Օրենքը չի առանձնացնում կուսակցություններին, ուստի պետք է պարզել թե որքանով են կուսակցությունները ընդգրկվում «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքով սահմանված՝ տեղեկատվություն տնօրինողներից որևէ խմբի սահմաններում:

Այսպես, կուսակցությունների սահմանումից հստակ է, որ կուսակցությունները պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմիններ կամ պետական հիմնարկներ չեն: Այժմ անդրադառնալով կուսակցությունների վերաբերելիությանը բյուջեներից ֆինանսավորվող և հանրային նշանակության կազմակերպություններին:

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ հանրային նշանակության կազմակերպություններ են ապրանքային շուկայում մենաշնորհի կամ գերիշխող դիրք ունեցող, ինչպես նաև առողջապահության, սպորտի, կրթության, մշակույթի, սոցիալական ապահովության, տրանսպորտի և կապի, կոմունալ ոլորտներում հանրությանը ծառայություններ մատուցող ոչ պետական կազմակերպությունները:

Կուսակցությունների հասկացությունից բխում է, որ կուսակցությունները ապրանքային շուկայում մենաշնորհի կամ գերիշխող դիրք ունեցող կազմա-

կերպություններ չեն կարող լինել, քանի որ որպես այդպիսին կուսակցությունները չեն զբաղվում ձեռնարկատիրական գործունեությամբ: Նաև, «Կուսակցությունների մասին» ՀՀ օրենքի 3-րդ կետով սահմանված է, որ կուսակցությունների գործունեության նպատակը հասարակության և պետության քաղաքական կյանքին մասնակցելն է, այնինչ «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 4-րդ մասը քաղաքականության ոլորտի մասին լռում է: Բացի այդ, եթե անգամ կուսակցությունների նպատակները, որոնք արտացոլվում են կուսակցությունների կանոնադրություններում և ծրագրերում, լինեն առողջապահական, մշակութային կամ սոցիալական բնույթի, վերաբերեն միայն կրթության կամ սպորտի ոլորտներին, միևնույն է կուսակցությունները չեն համարվի հանրային նշանակության կազմակերպություններ, քանի որ դրանք վերոնշյալ ոլորտներում հանրությանը ծառայություններ չեն մատուցում:

Այսպիսով, ելնելով վերոգրյալից՝ կուսակցությունները հանրային նշանակության կազմակերպություններ չեն համարվում և որպես հանրային նշանակության կազմակերպություններ նույնպես չեն մտնում «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի մեջ:

«Կուսակցությունների մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի համաձայն կուսակցության դրամական միջոցները ձևավորվում են նաև բյուջետային ֆինանսավորումից: Իսկ նույն օրենքի 27-րդ հոդվածը նախատեսում է կուսակցությունների գործունեության պետական ֆինանսավորման կարգը: 27-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Կուսակցությունների պետական ֆինանսավորումը կատարվում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի միջոցների հաշվին»: Սակայն ոչ բոլոր կուսակցություններն են ստանում հատկացումներ բյուջեից. 27-րդ հոդվածի համաձայն՝ «Պետական բյուջեից միջոցներ հատկացվում են այն կուսակցությանը (կուսակցությունների դաշինքին), որի ընտրական ցուցակն Ազգային ժողովի վերջին ընտրությունների ժամանակ ստացել է քվեարկությանը մասնակցած բոլոր կուսակցությունների ընտրական ցուցակների օգտին կողմ տրված ձայների ընդհանուր թվի և անճշտությունների թվի գումարի առնվազն 3 տոկոսը»:

Այսպիսով, այն կուսակցությունները, որոնք ֆի-

նանսավորում են ստանում բյուջեից, «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի տրամաբանությունից ելնելով համարվում են տեղեկատվություն տնօրինող, և նրանց վրա տարածվում են ՏԱ մասին ՀՀ օրենքով սահմանված այն բոլոր իրավունքները և պարտականությունները, որոնք նախատեսված են տեղեկատվություն տնօրինողների համար: Իսկ այն կուսակցությունները, որոնք բյուջեից ֆինանսավորում չեն ստանում, դուրս են մնում այս օրենքի շրջանակներից:

Չնայած կուսակցությունները որպես այդպիսիք ներառված չեն «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքում, սակայն մի շարք այլ իրավական ակտերով սահմանվում է կուսակցությունների՝ հրապարակային աշխատելու և տեղեկություններ հրապարակելու պարտականությունը: Օրինակ, ինչպես նշեցինք՝ ՀՀ Սահմանադրությունն ամրագրում է, որ «Կուսակցություններն ապահովում են իրենց ֆինանսական գործունեության հրապարակայնությունը»:

«Կուսակցությունների մասին» ՀՀ օրենքի համաձայն կուսակցությունը պարտավոր է հրապարակել տեղեկություններ իր հիմնադիր համագումարի վերաբերյալ: Օրենքի 12-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ «Հիմնադիր համագումարի կազմակերպիչները հիմնադիր համագումարի անցկացման օրվանից առնվազն մեկ ամիս առաջ զանգվածային լրատվության միջոցներով հրապարակում են կուսակցության հիմնադիր համագումարի անցկացման տեղի և ժամի մասին լրատվություն, ինչպես նաև կուսակցության կանոնադրության և ծրագրի նախագծերի հիմնական դրույթները»:

«Կուսակցությունների մասին» ՀՀ օրենքը կարգավորում է նաև կուսակցությունների ֆինանսական գործունեության հրապարակայնության հարցը: Այսպես, օրենքի 22-րդ հոդվածը սահմանում է, որ կուսակցությունը պարտավոր է յուրաքանչյուր տարի մամուլում հրապարակել գույքի օգտագործման վերաբերյալ հաշվետվություն՝ նշելով դրա կազմավորման աղբյուրները: Օրենքի մեկ այլ՝ 28-րդ հոդվածը սահմանում է կուսակցության կողմից ֆինանսական հաշվետվությունը հրապարակելու պարտականությունը: Այս հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ «Կուսակցությունը, հաշվետու տարվան հաջորդող մարտի 25-ից ոչ ուշ, զանգվածային լրատվության միջոցներում հրապարակում

է իր ֆինանսական հաշվետվությունը»: Նույն հոդվածի 3-րդ կետը նշում է, թե ինչ տեղեկություններ պետք է ներառվեն կուսակցության ֆինանսական հաշվետվության մեջ. «Հաշվետու տարվա ընթացքում կուսակցության ստացած և ծախսած միջոցների մասին հաշվետվությունը պետք է տվյալներ պարունակի կուսակցության հաշվում մուտք արված միջոցների աղբյուրների և ծավալի, այդ միջոցների ծախսման, ինչպես նաև ունեցած գույքի մասին՝ նշելով դրա արժեքը»:

«Կուսակցությունների մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի 6-րդ կետի համաձայն՝ «Կուսակցության ստացած՝ օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից ավելի արժուողությամբ նվիրատվության աղբյուրը նշվում է կուսակցության ֆինանսական հաշվետվությունում»: Այսինքն, այդ տվյալը նույնպես ներառվում է կուսակցության ֆինանսական հաշվետվության մեջ և ենթակա է հրապարակման:

Ընտրությունների և նախընտրական քարոզչության ընթացքում կուսակցությունների վերաբերյալ տեղեկությունների պարտադիր հրապարակում սահմանում է ՀՀ Ընտրական օրենսգիրքը: Այս դեպքում, սակայն, տեղեկությունների հրապարակումն իրականացվում է ոչ թե անմիջականորեն կուսակցությունների կողմից, այլ միջնորդավորված՝ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից:

Այսպես, ՀՀ Ընտրական օրենսգրքի 6-րդ հոդվածի 4-րդ կետը հնարավորություն է տալիս կուսակցություններին ԿԸՀ ներկայացնել իրենց նախընտրական ծրագրերը կենտրոնական ընտրական հանձնաժողովի սահմանած էլեկտրոնային ձևով՝ կենտրոնական ընտրական հանձնաժողովի համացանցային կայքում տեղադրելու համար: Կենտրոնական ընտրական հանձնաժողովն այդ ծրագրերը տեղադրում է համացանցային կայքում ներկայացվելուց հետո՝ մինչև հաջորդ աշխատանքային օրվա ավարտը:

ՀՀ Ընտրական օրենսգրքի 6-րդ հոդվածի 6-րդ կետի համաձայն՝ կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների) ընտրական ցուցակների գրանցման համար համամասնական ընտրակարգով ընտրություններին մասնակցող կուսակցությունները (կուսակցությունների դաշինքում ընդգրկված կուսակցությունները) կենտրոնական

ընտրական հանձնաժողով են ներկայացնում կուսակցության գույքի և ֆինանսական միջոցների մասին հայտարարագիր: Նույն հոդվածի 7-րդ կետի համաձայն՝ կուսակցությունների հայտարարագրերը ներկայացնելուց հետո՝ եռօրյա ժամկետում, տեղադրվում են Կենտրոնական ընտրական հանձնաժողովի համացանցային կայքում:

Ընտրական գործընթացում կուսակցությունների ֆինանսական գործունեության հրապարակայնությանն է անդրադառնում նաև ՀՀ Ընտրական օրենսգրքի 27-րդ հոդվածը, որի 1-ին կետը սահմանում է, որ կուսակցությունները, կուսակցությունների դաշինքներն իրենց նախընտրական հիմնադրամներ կատարված մուծումների և դրանց օգտագործման վերաբերյալ հայտարարագրերը ներկայացնում են կենտրոնական ընտրական հանձնաժողովի վերահսկիչ-վերստուգիչ ծառայություն: Այստեղ նշվում են նախընտրական հիմնադրամ կատարված մուծումների ժամանակագրությունը, մուծված գումարի չափը, ՀՀ Ընտրական օրենսգրքի 26-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված յուրաքանչյուր ծառայության, գույքի, ապրանքի ձեռքբերման համար կատարված ծախսերը, դրանց կատարման ժամկետը, ծախսերի կատարումը հաստատող փաստաթղթերի տվյալները և հիմնադրամում մնացած գումարի չափը: 27-րդ հոդվածի 4-րդ կետի համաձայն՝ այս հայտարարագրերը հրապարակվում են դրանք ներկայացնելուց հետո՝ եռօրյա ժամկետում, տեղադրվելով կենտրոնական ընտրական հանձնաժողովի կայքում՝ www.elections.am:

Միջազգային փորձ

Կուսակցությունները, որպես այդպիսիք, ուղղակիորեն չներառվելով «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի մեջ, այնուամենայնիվ պետք է գործեն հրապարակային, և նրանց հրապարակային գործելաոճին և տեղեկացնելու պարտականությանն է անդրադառնում ինչպես ՀՀ Սահմանադրությունը, այնպես էլ «Կուսակցությունների մասին» ՀՀ օրենքը և ՀՀ Ընտրական օրենսգիրքը: Այժմ տեսնենք, թե որպես տեղեկատվություն տնօրինող ինչպիսի կարգավիճակ ունեն կուսակցությունները այլ երկրներում:

- **Բուլղարիայում** այն կուսակցությունները, որոնք հատկացումներ են ստանում պետությունից, համարվում են տեղեկատվություն տնօրին-

նողներ:

- **Միացյալ թագավորությունում/Շոտլանդիայում** քաղաքական կուսակցությունները ներառված չեն տեղեկատվության ազատության օրենսդրության մեջ, սակայն կուսակցությունների ֆինանսական թափանցիկությունը կարգավորվում է տեղեկատվության ազատությանը չվերաբերող իրավական ակտերով և Ընտրական հանձնաժողովի կողմից:
- **Մակեդոնիայի** Տեղեկատվական հանձնաժողովը որոշել է բացառել կուսակցությունների ֆինանսական հաշվետվությունները տեղեկատվության ազատության ոլորտից և չճանաչել կուսակցություններին որպես տեղեկատվություն տնօրինողներ:
- **Սերբիայում և Սլովենիայում** կուսակցությունները ներառված չեն տեղեկատվության ազատության վերաբերյալ օրենքում:
- **Լատվիայում** քաղաքական կուսակցությունները որպես այդպիսիք ներառված չեն տեղեկատվության ազատության ոլորտում: Քաղաքական կուսակցությունների հրապարակայնությունը և թափանցիկությունը կարգավորվում է տարբեր հատուկ նորմերով:
- **Ռուսաստանի Դաշնությունում** քաղաքական կուսակցությունները համարվում են հասարակական միավորումներ և չեն համարվում տեղեկատվության ազատության վերաբերյալ օրենքի սուբյեկտ:
- **Խորվաթիայում** քաղաքական կուսակցությունների վրա չի տարածվում տեղեկատվության ազատության վերաբերյալ օրենքը, սակայն քաղաքական կուսակցությունների ֆինանսավորման վերաբերյալ իրավական ակտով այս երկրում կուսակցությունները պարտավոր են սեփական նախաձեռնությամբ իրենց կայքերում հրապարակել տարեկան ֆինանսական հաշվետվությունները:

- **Ինդոնեզիայում** քաղաքական կուսակցությունները համարվում են տեղեկատվություն տնօրինողներ: Տեղեկատվության ազատության վերաբերյալ Ինդոնեզիայի համապատասխան օրենքը պարտադրում է քաղաքական կուսակցություններին սեփական նախաձեռնությամբ հրապարակել մի շարք տեղեկություններ (սկզբունքները և նպատակները, ընդհանուր ծրագիրը, որոշումների ընդունման մեխանիզմը, կուսակցության որոշումները և այլն):

- **Չեխիայում** կուսակցությունները ներառված չեն տեղեկատվության ազատության վերաբերյալ համապատասխան իրավական ակտում և համարվում են շահույթ չհետապնդող կազմակերպություններ, սակայն պարտավոր են հրապարակել բավական ծավալուն տեղեկություններ ֆինանսական գործունեության և ծախսերի վերաբերյալ:

Նշենք նաև, որ մի շարք երկրների դատարաններ որոշել են, որ քաղաքական կուսակցությունների վերաբերյալ որոշակի տեղեկատվություն պետք է հասանելի լինի: Այսպիսի որոշումներ կայացրել են Կանադայի, Կոստա Ռիկայի, Չնդկաստանի, Իսրայելի, Մեքսիկայի դատարանները:

www.foi.am
www.givemeinfo.am

«ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ԶԿ

Հասցե	ք. Երևան, Փ. Բյուզանդի 1/3, 4-րդ հարկ
Հեռ./ֆաքս,	560 360, 521775 #427
Էլ. փոստ	foi@foi.am
Կայք	www.foi.am